ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» մայիսի 2024 **թվականի** N 749-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԶՆՈՑ ՓՈՂՈՑԻ N 44 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԷԴԳԱՐ ՍԱՍՈՒՆԻԿԻ ԷԼԲԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ 131.86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 149.67 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 44 հասցեի համայնքապատկան հողամասում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է բնակելի շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Էդգար Սասունիկի Էլբակյանը:

Քաղաքացի Էդգար Սասունիկի Էլբակյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով և հիմք ընդունելով շինությունները Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023LZKEBY ծածկագիրը և քաղաքացի Էդգար Սասունիկի Էլբակյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հոկտեմբերի 18-ին N 22597 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ճանաչել քաղաքացի Էդգար Սասունիկի Էլբակյանի (ծնված 1989 թվականի հոկտեմբերի 29-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 44 հասցեում գտնվող 149.67 (մեկ հարյուր քառասունինն ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 131.86 (մեկ հարյուր երեսունմեկ ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների նկատմամբ:
2. Ճանաչել քաղաքացի Էդգար Սասունիկի Էլբակյանի (ծնված 1989 թվականի հոկտեմբերի 29-ին) և ընդհանուր բակում առկա, իրեն պատկանող շինությանը կից կառուցված բնակելի տան տնօրինողի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 44 հասցեում գտնվող 5.28 (հինգ ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 4.87 (չորս ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության նկատմամբ:
3. Ճանաչել քաղաքացի Էդգար Սասունիկի Էլբակյանի (ծնված 1989 թվականի հոկտեմբերի 29-ին) և ընդհանուր բակում առկա, մյուս բոլոր բնակելի տների տնօրինողների ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ավզնոց փողոցի N 44 հասցեում գտնվող 121.33 (մեկ հարյուր քսանմեկ ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 0.69 (զրո ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարսպի նկատմամբ:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Էդգար Սասունիկի Էլբակյանի միջոցների հաշվին:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Էդգար Սասունիկի Էլբակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.03.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2024 թվականի N 748-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱԼԵՔՍԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՂԱԼԱՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 224 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 27.35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 2 ՊԱՏՈՒՀԱՆԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 2 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 6.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ալեքսան Անուշավանի Ղալաչյանին պատկանող Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 224 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ն ինքնակամ կառուցված է 27.35 (քսանյոթ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ փակված է 2 (երկու) պատուհան, ինքնակամ բացված է 2 (երկու) պատուհան և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 6.1 (վեց ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023Z2AF8Z և N 20234VP6D8 ծածկագրերով:

Քաղաքացի Ալեքսան Անուշավանի Ղալաչյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ Ալեքսան Անուշավանի Ղալաչյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի, 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Ալեքսան Անուշավանի Ղալաչյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 11-ին N 26616 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Ալեքսան Անուշավանի Ղալաչյանին պատկանող Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 224 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 27.35 (քսանյոթ ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ փակված 2 (երկու) պատուհանը, ինքնակամ բացված 2 (երկու) պատուհանը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 10900 (տասը հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Ճանաչել քաղաքացի Ալեքսան Անուշավանի Ղալաչյանի (ծնված 1966 թվականի նոյեմբերի 28-ին) սեփականության իրավունքը՝ իրեն պատկանող, Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 224 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 6.1 (վեց ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալեքսան Անուշավանի Ղալաչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.03.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» Հոկտեմբեր 2024 թվականի N 744 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 1525-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2018 թվականի օգոստոսի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվելիք աշխատակիցների ցուցակը հաստատելու մասին>> N 1525-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվելիք աշխատակիցներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x _____ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2024 թվականի
մարտի 12-ի N 147-Ա որոշման
Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2018 թվականի
օգոստոսի 21-ի N 1525 -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվելիք աշխատակիցների

1. Սամսոնյան Վարդգես – Գյումրի համայնքի (այսուհետ՝ համայնք) ղեկավար,
2. Սանոյան Լուսինե - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
3. Ջանոյան Սուրեն - համայնքի ղեկավարի տեղակալ,
4. Սուլթանյան Հայկ– համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական,
5. Ջիլավյան Լենա – համայնքի ղեկավարի խորհրդական,
6. Մանասյան Կնյազ-– համայնքի ղեկավարի խորհրդական,
7. Մկրտչյան Մենուա-– համայնքի ղեկավարի խորհրդական,
8. Բաղալյան Կարեն Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) քարտուղար,
9. Թովմասյան Լիլիթ - աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ,
10. Ալեքսանյան Շողիկ – աշխատակազմի կրթության բաժնի պետ,
11. Ղազարյան Միխակ – աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ,
12. Հակոբյան Շուռիկ – աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
13. Բարսեղյան Լևոն – աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստի ժամանակավոր պաշտոնակատար,
14. Չախոյան Արմենուհի – աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,
15. Վարդևանյան Սյուզաննա- աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ,
16. Մեքինյան Աննա- աշխատակազմի քարտուղարության բաժնի պետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» Մարտի 2024 **թվականի** N 746 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 07 -Ի N 1217 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Պ.Սևակի փողոց N 16/7 հասցեի 216,0 (երկու հարյուր տասնվեց) քառակուսի մետր մակերեսով հողամասը Գյումրու քաղաքապետի 07.06.2005 թվականի N 1217 որոշմամբ 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալության է տրամադրվել քաղաքացի Ստեփան Մնոյանին առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով: Նույն հողամասը՝ Պ.Սևակ փողոց N 16/5 հասցեով 216,0 (երկու հարյուր տասնվեց) քառակուսի մետր մակերեսով (ծածկագիր 08-001-0030-0004) սեփականության իրավունքով պատկանում է Գագիկ Տարիելի և Սերվենիկ Արտուշի Համբարյաններին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28112023-08-0056): Նկատի ունենալով, որ երկու հողամասերը համատեղվում են և վարձակալության ժամկետը լրացել է՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Գագիկ Համբարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 26-ին N 27742 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2005 թվականի հունիսի 07-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Ստեփան Մնոյանին առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով վարձակալությամբ հողամաս տրամադրելու մասին» N 1217-Ա որոշումը:
2. Լուծել հողամասի վարձակալության 2005 թվականի հուլիսի 06-ի (գրանցված սեղանամատյանում N 4117) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 0106176 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ստեփան Մնոյանին և Գագիկ Համբարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.03.2024

x

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» Մարտի 2024 թվականի N 745-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 03 -Ի N 1699-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա N 60/4 հասցեում տեղադրված տաղավարը ապամոնտաժվել է Գյումրու համայնքապետարանի կողմից և տարածքը կառուցապատումից ազատվել է:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Արթուր Դավթյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 23-ին N 1286 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2011 թվականի մայիսի 03-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Անահիտ Եսայանին ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով Գյումրու համայնքին պատկանող Գյումրի քաղաքի Հաղթանակի պող. թիվ 60/4 հասցեի 10,0 քառ.մ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1699-Ա որոշումը:
2. Լուծել կառուցապատման իրավունքի առուվաճառքի 2011 թվականի մայիսի 26-ի (գրանցված սեղանամատյանում N 4851) առուվաճառքի պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանում՝ N 2402935 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Դավթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

07.03.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» Մարտի 2024 թվականի N 749-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ԱԼԲԵՐՏԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Պ.ՍԵՎԱԿ ՓՈՂՈՑ N 3/5 ՀԱՍՑԵԻ ՏԱՂԱՎԱՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 18,67 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գևորգ Ալբերտի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Պ.Սևակի փողոց N 3/5 հասցեով տաղավարի սպասարկման և պահպանման համար փաստացի զբաղեցրած 18,67 (տասնութ ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը տրամադրվել է վարձակալության:

Քաղաքացի Գևորգ Ալբերտի Գալստյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 5-րդ կետի, 76- րդ հոդվածի 2-րդ կետի, քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի, հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Ալբերտի Գալստյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 15-ին N 627 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Գևորգ Ալբերտի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Պ.Սևակի փողոց N 3/5 հասցեով տաղավարի վարձակալության տրամադրված 18,67 (տասնութ ամբողջ վաթսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի վարձակալության ժամկետը երկարաձգել 5 (հինգ) տարի ժամկետով նույն պայմաններով:
2. Սահմանված կարգով կնքել հողի վարձակալության 2019 թվականի ապրիլի 12-ի պայմանագրի V-րդ գլխի 5-րդ կետի փոփոխությունների վերաբերյալ համաձայնագիր (պատասխանատու՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի՛ առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժին):
3. Հողի վարձակալության պայմանագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքների պետական վերագրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Գևորգ Ալբերտի Գալստյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գևորգ Ալբերտի Գալստյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.03.2024

x

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2024 **թվականի** N 243-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍՊԱՐՏԱԿԻ ՓՈՂՈՑԻ N 21 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 293.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ՓԱԿՎԱԾ 1 ՊԱՏՈՒՀԱՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 19.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սեդա Հարությունի Հարությունյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Սպարտակի փողոցի N 21 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 290.05 (երկու հարյուր իննսուն ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ փակված է 1 (մեկ) պատուհան, իսկ 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 3.31 (երեք ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 3.01 (երեք ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություն և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 19.5 (տասնինն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում N 2023SRBVUG և N 2023GCXANP ծածկագրերով:

Քաղաքացի Սեդա Հարությունի Հարությունյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված հողամասի և շինությունների նկատմամբ Սեդա Հարությունի Հարությունյանի սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի, 22.1-րդ կետի, 8.1 կետի, 18-րդ կետի դ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Սեդա Հարությունի Հարությունյանի կողմից լիազորված անձ Արմեն Խոցանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 18-ին N 27134 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Սեդա Հարությունի Հարությունյանին ժառանգության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Սպարտակի փողոցի N 21 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 290.05 (երկու հարյուր իննսուն ամբողջ հինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ փակված 1 (մեկ) պատուհանը և 3.31 (երեք ամբողջ երեսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 3.01 (երեք ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 11745 (տասնմեկ հազար յոթ հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Ճանաչել քաղաքացի Սեդա Հարությունի Հարությունյանի (ծնված 1960 թվականի դեկտեմբերի 27-ին) սեփականության իրավունքը՝ ժառանգության իրավունքով իրեն պատկանող, Գյումրի քաղաքի Սպարտակի փողոցի N 21 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 19.5 (տասնինն ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սեդա Հարությունի Հարությունյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

12.03.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ X _____ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» մարտի 2024 **թվականի** N 74Հ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑԻ N 15/1 ՀԱՍՑԵԻ 39.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Շիրազի փողոցի N 15/1 հասցեի 39.4 (երեսունինն ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Շիրազի փողոցի N 15/1 հասցեի 39.4 (երեսունինն ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» հունվարի 2024 թվականի № 741.Ա

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՊԱՅԾԱՌ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՕԶԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 8 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Պայծառ Մարգարյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №4566 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Ժառանգության իրավունքով քաղաքացի Պայծառ Մարգարյանին պատկանող Գյումրի քաղաք, Օզանյան փողոց, 1-ին նրբանցք, 8 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Օզանյան փողոց, 1-ին փակուղի, 13/1 բնակելի տուն

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» մարտի 2024 **թվականի** N 790-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՄԲՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության սամբոյի երիտասարդների 2024 թվականի մարտի 12–13-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով սամբոյի ֆեդերացիայի 2024 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2024 թվականի մարտի 11-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության սամբոյի երիտասարդների առաջնությանը մասնակցելու համար 2024 թվականի մարտի 12–13-ը քաղաք Երևան գործուղել թվով 1 մարզիկի և 1 մարզիչի գործուղման ծախսերի համար հատկացնել 6000(վեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թ.
մարտի 12-ի N 440-Ա որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ՀՀ սամբոյի երիտասարդների առաջնությանը մասնակցող Գյումրու հավաքական թիմի
Անդամների

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/ մարզիչ	Անձնագիր	Հաշվեհամար	Գումար
1.	Մեքինյան	Ալիկ	մարզիկ	AV0670369	2470071774280000	3000
2.	Գրիգորյան	Երվանդ	մարզիչ	AV0675156	163005962143	3000
Ընդամենը						6000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2024 **թվականի** N 739-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԼՅՈՎԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության ազատ ըմբշամարտի Լյովա Վարդանյանի հիշատակին նվիրված 2024 թվականի մարտի 14–17-ը Երևան քաղաքում կայանալիք հուշամրցաշարին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ըմբշամարտի ֆեդերացիայի 2024 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2024 թվականի մարտի 11-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության ազատ ըմբշամարտի Լյովա Վարդանյանի հիշատակին նվիրված հուշամրցաշարին մասնակցելու համար 2024 թվականի մարտի 14–17-ը Երևան քաղաք գործուղել թվով 5 մարզիկի և 2 մարզիչի գործուղման ծախսերի համար հատկացնել 258.000(երկու հարյուր հիսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
--Մարտի-- --12-ի-- N --739-Ա-- որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ազատ ըմբշամարտի Լյովա Վարդանյանի հիշատակին նվիրված հուշամրցաշարին
մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/մարզիչ	Անձնագիր	Հաշվեհամար	Գումար
1.	Ավետիսյան	Զավեն	մարզիկ	AV0503366	1150003857207232	38.000
2.	Մկրտչյան	Մուշեղ	մարզիկ	011860129	11802046815300	38.000
3.	Ասատրյան	Անդրանիկ	մարզիկ	AU0586394	220361832565000	38.000
4.	Նալբանդյան	Ֆելիքս	մարզիկ	011197498	163034005864	38.000
5.	Մարկոսյան	Դավիթ	մարզիկ	AV0587509	2478901822200000	38.000
6.	Պապոյան	Մանվել	մարզիչ	005357082	1510017390450300	34.400
7.	Մինասյան	Արտուշ	մարզիչ	AV0668375	1510039314180200	34.400
Ընդամենը՝						258.800

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2024 **թվականի** N 738-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 2745-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N 2745-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 26/09/2023 թվականի N Կ-26092023-08-0170):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի <<Քաղաքացիներ Թելման Շոթայի Ալեքսանյանին (1/3) և Ռիտա Շոթայի Ալեքսանյանին (2/3) պատկանող Գյումրի քաղաքի Սունդուկյան փողոց N 35 հասցեի բնակելի տան տակ ինքնակամ կառուցված 4,4 քառակուսի մետր մակերեսով նկուղն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 47,39 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին>> N 2745-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) որոշման 1-ին կետում <<(ծնված 1977 թվականի հունիսի 06-ին)>> բառերից և թվերից հետո լրացնել <<և ընդհանուր բակի համասեփականատերերի>> բառերը:

12.03.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» մարտի 2024 **թվականի** N 737-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N 490-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ջիվանու փողոցի N 91/2 հասցեի բնակելի տան զբաղեցրած 41.11 քառակուսի մետր մակերեսով հողամասի 20.55 քառակուսի մետր մակերեսով հատվածն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 490-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, քանի որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթը կասեցվել է:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ջիվանու փողոցի N 91/2 հասցեի բնակելի տան զբաղեցրած 41.11 քառակուսի մետր մակերեսով հողամասի 20.55 քառակուսի մետր մակերեսով հատվածն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 490-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) Որոշման 1-ին կետում «հատվածը» բառից հետո լրացնել «՝որպես ընդհանուր բաժնային սեփականություն» բառերը:

12.03.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

<< 11 >> << Մարտի >> 2024 թվականի N 736-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 24 (ՔՍԱՆՉՈՐՍ)ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ելնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների Կանանց միջազգային տոնի կապակցությամբ կին աշխատակիցներին շնորհավորելու անհրաժեշտությունից՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 24 (քսանչորս) համայնքային ոչ առևտրայիին կազմակերպություններին որպես նվիրատվություն հատկացնել 685 000 (վեց հարյուր ութսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ՝համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

07.03.2024

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2024 թվականի
մարտի 11-ի N 76-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

ՀՀ	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՏԿԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ (ՀՀ ԴՐԱՄ)
1.	«Լապտերիկ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
2.	«Ծիածան-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
3.	«Թոռնիկ Մանուշակ մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
4.	«Ժպիտ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
5.	«Լուսաստղիկ-մսուր մանկապարտեզ»ՀՈԱԿ	30 000
6.	«Արձագանք-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
7.	«Լիլիթ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	25 000
8.	«Լիանա-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
9.	«Նանուլիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ	25 000
10.	«Արարատ կրթահամալիր» ՀՈԱԿ	30 000
11.	«Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
12.	«Գոհար-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
13.	«Փարոս-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
14.	«Անի պարտեզ մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
15.	«Կարմիր գլխարկ մանկապարտեզ» ՀՈԱԿ	25 000
16.	«Հենզել և Գրետել» ՀՈԱԿ	30 000
17.	«Սուրբ Մարիամ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	25 000
18.	«Գյումրու մանկիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ	25 000
19.	«Էյլիթիա-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
20.	«Ձյունիկ-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
21.	«Հուսո առագաստ մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
22.	«Երազանք մանկապարտեզ» ՀՈԱԿ	30 000
23.	«Անուլիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ	25 000
24.	«Մուշ Զարգացման կենտրոն» ՀՈԱԿ	25 000
	Ընդամենը	685 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» մարտի 2024 թվականի № 735 Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 27.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1248-0001, 08-001-1852-0001) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոցի հարևանությամբ գտնվող 27.36 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1248-0001, 08-001-1852-0001) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Խրիմյան Հայրիկի փողոց, 70/1 հողամաս

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» մարտի 2024 թվականի № 734-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Հ. ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑ, 7/1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №27022024-08-0007) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արմինե Սարգսյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №4386 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Մինասյան Մարինե Լուկաշենի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Հ. Ղանդիլյան փողոց, 7/1 հողամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №27022024-08-0007) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1. 87.0 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
   ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 7/1 հողամաս
2. 60.9 քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝
   ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Ղանդիլյան փողոց, 7/3 հողամաս

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» Դեկտեմբեր 2024 թվականի № 733-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ, 203 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ 38.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 59.52 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 23-ի №542–Ա որոշումը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ա. Շիրակացու փողոց, 203 հասցեի շենքի բակում գտնվող 38.5 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 59.52 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակին տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրակացու փողոց, 203/2 ավտոտնակ

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» Մարտի 2024 թվականի N 732-Ա

«Լ.Ա.Ռ. ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ 2/2 ԹԱՂԱՄԱՍԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՇԵՆՔ 4/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Լ.Ա.Ռ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Սարգսյանի (ՀՎՀՀ՝ 05541002, գրանցման ամսաթիվը՝ 10.01.2014 թ.) 2024 թվականի փետրվարի 26-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 27-ին 3936-2024 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Լ.Ա.Ռ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Սարգսյանին Գյումրի քաղաքի Մուշ 2/2 թաղամասի 7-րդ փ. շ. 4/2 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի մարտի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լ.Ա.Ռ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Աննա Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2024 **թվականի** N 731-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՄԱՆ ԲԱԴՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 7/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռոման Բադոյանի (ՀՎՀՀ՝ 57245548, գրանցման ամսաթիվը՝ 04.05.2006 թ.) 2024 թվականի փետրվարի 28-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 28-ին 4094-2024 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռոման Բադոյանին Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 7/1 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռոման Բադոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.03.2024

x _____ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2024 **թվականի** N 730-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱՐԵԿ ՄՈՍՈՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նարեկ Մոսոյանի (ՀՎՀՀ՝ 57295903, գրանցման ամսաթիվը՝ 04.05.2006 թ.) 2024 թվականի փետրվարի 28-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 28-ին 4099-2024 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Նարեկ Մոսոյանին Գյումրի քաղաքի Արագած 14 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Նարեկ Մոսոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» Մարտի 2024 **թվականի** N 729-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԱՐԻՍԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ 9/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լարիսա Մարտիրոսյանի (ՀՎՀՀ՝ 57457649, գրանցման ամսաթիվը՝ 05.05.2023) 2024 թվականի փետրվարի 27-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 29-ին 4183-2024 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Լարիսա Մարտիրոսյանին Գյումրի քաղաքի Պարույր Սևակ 9/1 հասցեում իրականացնել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Լարիսա Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.03.2024

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 07 >> մարտի 2024 թվականի N 728 -Ա

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԱԿԱՆ ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 8-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻԻ << ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ, 185-րդ հոդվածի 2-րդ մասերով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 7-ի N 14-Ա կարգադրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի << Մհեր Մկրտչյանի թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն Շողիկ Արամայիսի Մելքոնյանին՝ 2024 թվականի մարտի 8-ի տոնական ոչ աշխատանքային օրն ապահովել կազմակերպության բնականոն աշխատանքը:
2. Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շողիկ Արամայիսի Մելքոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ԱԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 07 >> մարտի 2024 թվականի N 727-Ա

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԱԿԱՆ ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 8-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԿՈՒՄԱՅՐԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ, 185-րդ հոդվածի 2-րդ մասերով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 7-ի N 14-Ա կարգադրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Կումայրի պատմամշակութային արգելոց-թանգարան >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ինգա Էդուարդի Ավագյանին՝ 2024 թվականի մարտի 8-ի տոնական ոչ աշխատանքային օրն ապահովել կազմակերպության բնականոն աշխատանքը:

2. Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ինգա Էդուարդի Ավագյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2024 թվականի N 726-Ա

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԱԿԱՆ ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 8-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ, 185-րդ հոդվածի 2-րդ մասերով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 7-ի N 14-Ա կարգադրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու «Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի աշխատանքային պարտականությունները ժամանակավորապես կատարող Մարինա Ժորայի Մանուչարովային՝ 2024 թվականի մարտի 8-ի տոնական ոչ աշխատանքային օրն ապահովել կազմակերպության բնականոն աշխատանքը:
2. Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարինա Ժորայի Մանուչարովային պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<<07>> մարտի 2024 թվականի N 725 -Ա

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԱԿԱՆ ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 8-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄԱՐԻԱՄ ԵՎ ԵՐԱՆՈՒՀԻ ԱՍԼԱՄԱԶՅԱՆ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ, 185-րդ հոդվածի 2-րդ մասերով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 7-ի N 14 -Ա կարգադրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Վալերիի Բարսեղյանին՝ 2024 թվականի մարտի 8-ի տոնական ոչ աշխատանքային օրն ապահովել կազմակերպության բնականոն աշխատանքը:
2. Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Վալերիի Բարսեղյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

07.03.2024

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2024 թվականի N 726 -Ա

ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԱԿԱՆ ՈՉ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 8-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐԻԻ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածի 2-րդ, 185-րդ հոդվածի 2-րդ մասերով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Արագածի Թովմասյանի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 7-ի N 14-Ա կարգադրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրիի Ավետիք Իսահակյանի հուշատուն - թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարինե Ռաֆիկի Վիրաբյանին՝ 2024 թվականի մարտի 8-ի տոնական ոչ աշխատանքային օրն ապահովել կազմակերպության բնականոն աշխատանքը:

2. Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Ռաֆիկի Վիրաբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

07.03.2024

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2024 թվականի N 723-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՏԱՎԱԶԴ ՄԵԼԻՔԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արտավազդ Մելիքի Ոսկանյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

2. Վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտավազդ Մելիքի Ոսկանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

07.03.2024

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» Հունվար 2024 **թվական** N 722-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼՈՒԻԶԱ ՄԻԽԱՅԵԼԻ ՍԵԹՈՅԱՆԻՆ, ՀՐԱՉ ԹՈՒՄԱՍԻ ՍԵԹՈՅԱՆԻՆ, ՎԱՀԱՆ ՀՐԱՉԻ ՍԵԹՈՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐ ՀՐԱՉԻ ՍԵԹՈՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Լուիզա Միխայելի Սեթոյանը (անձնագիր՝ AL 0359884, տրված՝ 28.07.2023թ. 065-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Վարդ-Բաղի 1մ/շ 1թաղ. 6շենք թիվ1 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի փետրվարի 20-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Վարդ- Բաղ 1մ/շ 1 թաղ. 6 շենք թիվ 1 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2005 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2119 որոշմամբ Գյումրի քաղաքի Վարդ- բաղ 1 թաղամաս 6 շենք 1 բնակարանը հատկացվել է Լուիզա Սեթոյանի չորս անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, ամուսնուն, աղջկան, տղային :

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2005 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2119 որոշմամբ որոշմամբ տրված թիվ 1 միասնական օրդերը, 2024 թվականի հունվարի 26-ի Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի N 8/12-374 գրությունը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի դեկտեմբերի 6-ի տեղեկանքը, Լուիզա Միխայելի Սեթոյանի, Հրաչ Թումասի Սեթոյանի, Վահան Հրաչի Սեթոյանի, Գոհար Հրաչի Սեթոյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի փետրվարի 20-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մարտի 4-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ քաղաքացի Լուիզա Միխայելի Սեթոյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք. Գյումրի Վարդ- բաղ 1 թաղամաս 6 շենք, թիվ 1 հասցեի 63.62 (վաթսուներեք ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1168432 վկայական)

բ) Գյումրի քաղաքի Վարդ- բաղ 1 թաղ. 6 շենք թիվ 1 հասցեի բնակարանը 2005 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2005 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2119 որոշում):

գ) Քաղաք Գյումրի Վարդ-Բաղ 1մ/շ 1 թաղամաս 6 շենք 1 հասցեում հաշվառված բնակվում են՝ Հրաչ Թումասի Սեթոյանը 2009 թվականից, Լուիզա Միխայելի Սեթոյանը 2008 թվականից (հիմք՝ 2024 թվականի հունվարի 26-ի Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի N 8/12-374 գրություն, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի դեկտեմբերի 6-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացիներ Հրաչ Թումասի Սեթոյանի, Լուիզա Միխայելի Սեթոյանի, Գոհար Հրաչի Սեթոյանի, Վահան Հրաչի Սեթոյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՏ-18122023-99-0247, N ԱՏ-18122023-99-0337, 2023 թվականի դեկտեմբերի 19-ի N ԱՏ-19122023-99-0149, 2024 թվականի փետրվարի 14-ի N ԱՏ-14022024-99-0624 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Լուիզա Միխայելի Սեթոյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Վարդ - Բաղ 1 թաղ. 6 շենք թիվ 1 հասցեի բնակարանը վարձակալել է 2005 թվականի հոկտեմբերի 20-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը

պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Լուիզա Միխայելի Սեթոյանի դիմումը բավարարել:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ք. Գյումրի Վարդ- բաղ 1 թաղամաս 6 շենք, թիվ 1 հասցեի 63.62 (վաթսուներեք ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Լուիզա Միխայելի Սեթոյանին ծնված՝ 1963 թվականին,
2) Հրաչ Թումասի Սեթոյանին ծնված՝ 1960 թվականին,
3) Վահան Հրաչի Սեթոյանին ծնված՝ 1985 թվականին,
4) Գոհար Հրաչի Սեթոյանին ծնված՝ 1988 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Լուիզա Միխայելի Սեթոյանին, Հրաչ Թումասի Սեթոյանին, Վահան Հրաչի Սեթոյանին, Գոհար Հրաչի Սեթոյանին :
3. Քաղաքացիներ՝ Լուիզա Միխայելի Սեթոյանին, Հրաչ Թումասի Սեթոյանին, Վահան Հրաչի Սեթոյանին,Գոհար Հրաչի Սեթոյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Լուիզա Միխայելի Սեթոյանին, Հրաչ Թումասի Սեթոյանին, Վահան Հրաչի Սեթոյանին, Գոհար Հրաչի Սեթոյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

06.03.2024

X

2024թ. Գյումրի համայնք **Վ.ՍԱՖՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» Հունվար 2024 **թվական** N 721-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԿԱՐԵՆ ՌՈՒԲԵՆԻ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ, ԱԼԵՏԱ ՀՄԱՅԱԿԻ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Կարեն Ռուբենի Քալաշյանը (անձնագիր՝ AU 0313962 տրված՝ 11.06.2021թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Վարդ-բաղ 1մ/շ 2թաղ. 5շենք, թիվ 4 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի փետրվարի 13-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Վարդ-բաղ 1մ/շ 2 թաղամաս 5 շենք թիվ 4 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 7-ի թիվ 21-Ա որոշմամբ քաղաքացիներ Ալետա Հմայակի Քալաշյանի և Կարեն Ռուբենի Քալաշյանի հետ կնքվել է Գյումրի համայնքի Վարդ-Բաղի 1-ին մ/շ 2-րդ թաղամաս 5 շենքի թիվ 4 հասցեի 63.14 (վաթսուներեք ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի վաճառքի պայմանագիր անորոշ ժամկետով՝ ամսական 631.40 (վեց հարյուր երեսունմեկ դրամ քառասուն լումա) վարձավճարով, որն ստացել է նոտարական վավերացում և պետական գրանցում (հիմք՝ 02.02.2023թ. սեղանամատյանում գրանցված №646 վարձակալության պայմանագիր և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական №09022023-08-002):

Դիմումին կից ներկայացվել է №09022023-08-0002 վարձակալության վկայականի պատճենը, 02.02.2023թ. գրանցամատյանում գրանցված №646 վարձակալության պայմանագիրը, 2024 թվականի փետրվարի 6-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյա թիվ 240642064036, 2024 թվականի փետրվարի 13-ի «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի թիվ 267 տեղեկանքները, Կարեն Ռուբենի Քալաշյանի, Ալետա Հմայակի Քալաշյանի անձնագրերի պատճենները, վարձակալության վճարի N 000675 անդորրագիրը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ
հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ

հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի փետրվարի 13-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մարտի 4-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Կարեն Ռուբենի Քալաշյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2 ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Վարդ-Բաղի 1մ/շ 2 թաղամաս 5 շենք թիվ 4 հասցեի 63.14 (վաթսուներեք ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 24092021-08-0059 վկայական):

բ) Շիրակ Գյումրի Վարդ-Բաղի 1-ին մ/շ 2-րդ թաղամաս 5 շենքի թիվ 4 հասցեում հաշվառված բնակվում են՝ Ալետա Հմայակի Քալաշյանը 2009թվականից, Կարեն Ռուբենի Քալաշյանը 2009 թվականից (հիմք՝ 2024 թվականի փետրվարի 6-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ թիվ 240642064036 և 2024 թվականի փետրվարի 13-ի «Գյումրու Բնակարանների Սպասարկում» համատիրության տեղեկանքներ):

գ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Ալետա Հմայակի Քալաշյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, նրա կողմից 1998թ.մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ: Կարեն Ռուբենի Քալաշյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Գործարանային փողոց 8/9 մառան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: Նրա կողմից 1998թ.մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Գործարանային փողոց 8/9 մառան հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Շիրակի մարզ, քաղաք Գյումրի Վարդ-Բաղի 1մ/շ 2 թաղամաս 5 շենք թիվ 4 հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է վերոնշյալ քաղաքացիների վարձակալության իրավունքը (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 9-ի N US-09022024-99-0924, N US-09022024-99-0569 տեղեկանքներ):

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել

քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու՝ ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Կարեն Ռուբենի Քալաշյանի դիմումը բավարարել:

3 ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Չեղյալ ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 7-ի թիվ 21-Ա «Քաղաքացիներ Ալետա Հմայակի Քալաշյանի և Կարեն Ռուբենի Քալաշյանի հետ Գյումրի համայնքի Վարդ-Բաղի 1մ/շ 2 թաղամաս 5 շենք թիվ 4 հասցեի բնակարանի վաճառքի պայմանագիր կնքելու մասին» որոշումը:

2. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Վարդ-Բաղի 1մ/շ 2 թաղամաս 5 շենք թիվ 4 հասցեի 63.14 (վաթսուներեք ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Կարեն Ռուբենի Քալաշյանին ծնված՝ 1981 թվականին,
2) Ալետա Հմայակի Քալաշյանին ծնված՝ 1949 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով :

3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Կարեն Ռուբենի Քալաշյանին, Ալետա Հմայակի Քալաշյանին:
4. Քաղաքացիներ՝ Կարեն Ռուբենի Քալաշյանին, Ալետա Հմայակի Քալաշյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին ՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Կարեն Ռուբենի Քալաշյանին, Ալետա Հմայակի Քալաշյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» հոկտեմբեր 2024 **թվական** N 720-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՀԱՅԿԱԶԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Կարեն Սամվելի Մուրադյանը (անձնագիր՝ AR 0688005, տրված՝ 14.05.2018թ., 016-ի կողմից,հաշվառված՝ ք. Գյումրի, Վ. Սարգսյան փողոց հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Տիգրան Հայկազի Մովսիսյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի հունվարի 26-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Ախուրյանի խճ. 2ա շենք թիվ 22 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Տիգրան Հայկազի Մովսիսյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 21-ի Շ-865 արխիվային տեղեկանքը, 2023 թվականի հունվարի 1-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի N 8/62-11 գրությունը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2024 թվականի հունվարի 24-ի տեղեկանքը, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2024 թվականի հունվարի 23-ի եզրակացությունը, Հայկազ Վոլոդյայի Մովսիսյանի, Սուսաննա Ֆրունզեի Մացակյանի, Վլադիմիր Հայկազի Մովսիսյանի, Տիգրան Հայկազի Մովսիսյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Ախուրյանի խճ. 2ա շենք թիվ 22 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, Հայկազ Վոլոդյայի Մովսիսյանի ձեռագիր հայտարարությունը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի հունվարի 26-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մարտի 4-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Տիգրան Հայկազի Մովսիսյանի լիազորված անձ՝ Կարեն Սամվելի Մուրադյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ախուրյանի խճ. 2Ա շենք թիվ 22 հասցեի 69.84 (վաթսունիններ ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 16022024-08-0003 վկայական):

բ) Ախուրյանի խճուղի թիվ 2 շենքի 3 մուտքի,1 հարկի թիվ 10/22 երեք սենյականոց բնակարանը Ախուրյանի շրջանային գործադիր կոմիտեի 1988թ. հունիսի 30-ի թիվ 12 արձանագրությամբ հատկացվել է Հայագրոշին մասնագիտացված տրեստի Ղուկասյանի տնտեսաշվարկային տեղանասի պետ Հայկազ Վոլոդյայի Մովսիսյանին (հիմք՝«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 21.03. 2023թ. Շ-865 արխիվային տեղեկանք):

գ) Քաղաք Գյումրի Ախուրյանի խճ. 2Ա շենք թիվ 22 հասցեում հաշվառված են՝ Մամիկոն Բեգի Մնոյանը 2012թվականից, Նարինե Սամվելի Մովսիսյանը 2012 թվականից: Ք. Գյումրի Ախուրյանի խճ. 2 շենք թիվ 10/22 և ք. Գյումրի Ախուրյանի խճ. 2 շենք թիվ 22 հասցեներում հաշվառված անձինք չկան (հիմք՝ Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի մարտի 14-ի N 8/63-251 գրություն և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի ապրիլի 5-ի տեղեկանք):

դ) Քաղաք Գյումրի Ախուրյանի խճ. 2Ա շենք թիվ 22 բնակարանը (նախկինում՝ Ախուրյանի խճ. 2 շենք թիվ 10/22) հատկացվել է Հայկազ Վոլոդյայի Մովսիսյանի չորս անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը՝ Սուսաննա Մացակյանին, երկու տղաներին՝ Տիգրան Մովսիսյանին և Վլադիմիր Մովսիսյանին (հիմք՝ «Գյումրի Կենտրոն» համատիրության 2024 թվականի հունվարի 24-ի տեղեկանք, ձեռագիր հայտարարություն) :

ե) Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղի 2ա հասցեով շենքի և թիվ 22 բնակարանի վնասվածությունը գնահատվում է առաջին, մասամբ ՝ երկրորդ աստիճանի, (հիմք՝ Սեդրակ Մուրադ անհատական ձեռնարկության 2024 թվականի հունվարի 23 -ի եզրակացություն):

զ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ՝ Հայկազ Վոլոդյայի Մովսիսյանի կողմից 1998թ. մարտի 1-ից առ այսօր կատարվել է օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան Ջրաշինարարների բանավանի 6 փողոց 11 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ ձեռքբերման, միաժամանակ բաժնեմասի օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է ք. Գյումրի Մուշ 2 թաղ.4/32 շենք, 13 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ:

է) Սուսաննա Ֆրունզեի Մացակյանի կողմից կատարվել է ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան Ջրաշինարարների բանավանի 6 փողոց 11 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ, օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, ք. Գյումրի Աթարբեկյան փողոց 211բնակելի տուն անշարժ գույքի նկատմամբ, իսկ ք. Գյումրի Մուշ 2 թաղ.4/32 շենք, 13 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ կատարվել է ձեռքբերման միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում:

ը) Վլադիմիր Հայկազի Մովսիսյանի կողմից կատարվել է ձեռքբերման միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան Ջրաշինարարների բանավանի 6 փողոց 11 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ:

թ) Տիգրան Հայկազի Մովսիսյանի կողմից ՀՀ տարածքում 01.03.1998թ.առ այսօր կատարվել է ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Շիրակի մարզ, համայնք Ախուրյան գյուղ Ղարիբջանյան Գյումրի-Արմավիր մայրուղի 1հողամաս, ք. Գյումրի Մուշ 2 թաղ.4/32 շենք, 13 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ ք. Գյումրի Աբովյան փողոց 232/1 հողամաս հասցեով անշարժ գույքի նկատմամբ կատարվել է ձեռքբերման միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի հունվարի 23-ի N ԱՏ-23012024-99-0622 տեղեկանք

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Տիգրան Հայկազի Մովսիսյանի լիազորված անձ՝ Կարեն Սամվելի Մուրադյանի դիմումը բավարարեց մասամբ:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ախուրյանի խճ. 2Ա շենք թիվ 22 հասցեի 69.84 (վաթսունինները ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության
եղանակով օտարել քաղաքացի՝
1) Տիգրան Հայկազի Մովսիսյանին ծնված՝ 1982 թվականին
որպես սեփականություն:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ ՏիգրանՀայկազիՄովսիսյանին :
3. Քաղաքացի՝ Տիգրան Հայկազի Մովսիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Տիգրան Հայկազի Մովսիսյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

2024թ. Գյումրի համայնք **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2024 **թվականի** N 719-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ Մ-14 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-14 տարեկան պատանիների 2024 թվականի մարտիի 13-ին Երևան քաղաքում կայանալիք 2023-2024թթ. առաջնության հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի ֆեդերացիայի 2024 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվ ածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշաման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2024 թվականի մարտիի 6-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-14 տարեկան պատանիների 2023-2024թթ. առաջնության հերթական տուրին մասնակցելու համար 2024 թվականի մարտիի 13-ին քաղաք Երևան գործուղել թվով 10 մարզիկի և 1 մարզիչի գործուղման ծախսերի համար հատկացնել 66.000(վաթսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թ.
Հունվարի 04-ի N 219-Ա որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Բասկետբոլի Մ–14 տարեկան պատանիների 2023–2024թթ. առաջնության հերթական տուրին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/ մարզիչ	Անձնագիր	Հաշվեհամար	Գումար
1.	Նահապետյան	Էդգար	մարզիկ	550512529	1570099294880100	6000
2.	Մելիք–Սարգսյան	Վահագ	մարզիկ	AU0340171	163002754451	6000
3.	Կարապետյան Ղուկասյան	Խաչիկ Մարինա	մարզիկ ծնող	AU0279435	220060667163000	6000
4.	Հակոբյան	Մաքս	մարզիկ	AL0294388	11802054748500	6000
5.	Բայրիկյան	Արկադի	մարզիկ	AL0448877	1570099300980100	6000
6.	Խաչատրյան	Ռուդիկ	մարզիկ	AL0446219	1570099358650100	6000
7.	Այվազյան	Սամվել	մարզիկ	AV0400709	1570099275080100	6000
8.	Ավետիսյան	Անուշավան	մարզիկ	550293143	19300447199400	6000
9.	Հակոբյան	Հրահատ	մարզիկ	550627711	16013079573700	6000
10	Տիրայան	Սերգեյ	մարզիկ	AU0501222	2472607690850000	6000
11.	Հարությունյան	Արտակ	մարզիչ	AS0351292	1510037597440200	6000
Ընդամենը						**66.000**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2024 **թվականի** N 718-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ Մ-16 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ 2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան պատանիների 2024 թվականի մարտիի 16-ին Երևան քաղաքում կայանալիք 2023-2024թթ. առաջնության հերթական տուրին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության բասկետբոլի ֆեդերացիայի 2024 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվ ածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2024 թվականի փետերվարի 7-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բասկետբոլի Մ-16 տարեկան պատանիների 2023-2024թթ. առաջնության հերթական տուրին մասնակցելու համար 2024 թվականի մարտիի 16-ին քաղաք Երևան գործուղել թվով 7 մարզիկի և 2 մարզիչի գործուղման ծախսերի համար հատկացնել 54.000(հիսունչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительна подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թ.
_____ _____ N _____ որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Բասկետբոլի Մ–16 տարեկան պատանիների 2023–2024թթ. առաջնության հերթական տուրին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/մարզիչ	Անձնագիր	Հաշվեհամար	Գումար
1.	Մուրադյան	Գագիկ	մարզիկ	AR 0631285	1570099330680100	6000
2.	Հակոբյան	Սամվել	մարզիկ	AV 0447724	1570099331260100	6000
3.	Դարբինյան	Տիգրան	մարզիկ	AL 0414651	1570099301220100	6000
4.	Այվազյան	Սամվել	մարզիկ	AV 0400709	1570099275080100	6000
5.	Խաչատրյան	Ռուդիկ	մարզիկ	AL 0446219	1570099358650100	6000
6.	Մանուկյան	Արտաշես	մարզիկ	AL 0436310	220540569443000	6000
7.	Կազիկյան	Հովհաննես	մարզիկ	AL 0446205	11802054865700	6000
8.	Հարությունյան	Արտակ	մարզիչ	AS 0351292	1510037597440200	6000
9.	Տիրայան	Արման	մարզիչ	AT 0608030	1510037592230300	6000
Ընդամենը						54.000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2024 **թվական** N 717Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳՍԻ ՊԱՊՈՅԱՆԻ, ԼԻԼԻԹ ԳՐԻՇԱՅԻ ԵՆԳՈՅԱՆԻ ՀԵՏ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սուսաննա Սարգսի Պապոյանը (անձնագիր AU 0242156, տրված՝ 22.04.2021թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Վարդ-բաղ 2թ/ղ 1մ/շ 5շենք, 32 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի փետրվարի 21-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Վարդ բաղ 1մ/շ 2 թաղ. 5 շենք թիվ 32 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հունիսի 16-ի թիվ 1193-Ա որոշմամբ Գյումրի քաղաքի Վարդ բաղ 1մ/շ 2 թաղամաս 5 շենք թիվ 32 բնակարանում առանց սեփականաշնորհման իրավունքի թույլատրվել է բնակվելու Սուսաննա Սարգսի Պապոյանի երկու անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, աղջկան:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հունիսի 16-ի թիվ 1193-Ա որոշմամբ տրված թիվ 32 միասնական օրդերը, 2024 թվականի հունվարի 26-ի Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի N 8/12-375 գրությունը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2024 թվականի փետրվարի 8-ի N 248 տեղեկանքը, Սուսաննա Սարգսի Պապոյանի, Լիլիթ Գրիշայի Ենգոյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի փետրվարի 21-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մարտի 4-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ Սուսաննա Սարգսի Պապոյանի մասնակցությամբ, նրանց բացատրվել են օրենքով իրենց վերապահված իրավունքները:

2 ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Արտակ Սուրիկի Հովհաննիսյանի դիմումը բավարարել:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ք.Գյումրի «Անի» թաղ. 3 փողոց 3 շենք թիվ 33 հասցեի 76.77 (յոթանասունվեց ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Արտակ Սուրիկի Հովհաննիսյանին ծնված 1972 թվականին,
2) Սուսաննա Սերգեյի Միքայելյանին ծնված 1948 թվականին,

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Արտակ Սուրիկի Հովհաննիսյանին, Սուսաննա Սերգեյի Միքայելյանին :
3. Քաղաքացիներ՝ Արտակ Սուրիկի Հովհաննիսյանին, Սուսաննա Սերգեյի Միքայելյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Արտակ Սուրիկի Հովհաննիսյանին, Սուսաննա Սերգեյի Միքայելյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

x

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2024 թվական N 704-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՄԵՆ ՍՄԲԱՏԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ , ԶԻՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ , ՎԱՀԵ ԱՐՄԵՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ , ԻՇԽԱՆՈՒՀԻ ԱՐՄԵՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Ալբերտ Մարտինի Մկոյանը (անձնագիր՝ AP 0587317, տրված՝ 30.09.2016թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Շիրակացու փող. 25/2 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Արմեն Սմբատի Մաթևոսյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի փետրվարի 21-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Երևանյան խճուղի 147ա շենք թիվ 42 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Արմեն Սմբատի Մաթևոսյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2003 թվականի մարտի 7-ի թիվ 188 որոշմամբ Երևանյան խճուղի 147ա շենքի թիվ 42 հասցեի բնակարանը հատկացվել է Արմեն Սմբատի Մաթևոսյանի հինգ անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, աղջկան, տղային, հորը:

Քաղաքացի Արշալույս Խաչիկի Մաթևոսյանը մահացել է 2004 թվականի հունվարի 26-ին հիմք՝ (ԱԱ 234606 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2003 թվականի մարտի 7-ի թիվ 188 որոշմամբ տրված թիվ 42 միասնական օրդերը, 2024 թվականի փետրվարի 14-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի թիվ 8/62-439 գրությունը, «Երևանյան 157ա» համատիրության 2024 թվականի փետրվարի 21-ի տեղեկանքը, Արմեն Մաթևոսյանի, Զինա Ղազարյանի, Իշխանուհի Մաթևոսյանի, Վահե Մաթևոսյանի լիազորագրերը Գյումրի համայնքից Երևանյան խճուղի 147ա շենք թիվ 42 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդհոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-

Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի փետրվարի 21-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մարտի 4-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Արմեն Սմբատի Մաթևոսյանի լիազորված անձ՝ Ալբերտ Մարտինի Մկոյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք. Գյումրի Երևանյան խճուղի 147ա շենք, թիվ 42 հասցեի 62.94 (վաթսուներկու ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1153831 վկայական):

բ) Գյումրի համայնքի Երևանյան խճուղի 147ա շենք թիվ 42 հասցեի բնակարանը 2003 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2003 թվականի մարտի 7-ի թիվ 188 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Երևանյան խճուղի 147ա շենք 42 հասցեում հաշվառված բնակվում են՝ Վարդուհի Վոլոդյայի Պասկևիչյանը 2020 թվականից, Զինա Համբարձումի Ղազարյանը 2012 թվականից, Իշխանուհի Արմենի Մաթևոսյանը 2012 թվականից, Էդիտա Նիկոլայի Պասկևիչյանը 2013 թվականից,Արմենուհի Սմբատի Մաթևոսյանը 2014 թվականից, Էդվին Նիկոլայի Թահմազյանը 2013 թվականից (հիմք՝ 2024թվականի փետրվարի 14-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի թիվ 8/62-436 գրություն, «Երևանյան 157ա» համատիրության 2024 թվականի փետրվարի 21-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Արմեն Սմբատի Մաթևոսյանի, Զինա Համբարձումի Ղազարյանի, Իշխանուհի Արմենի Մաթևոսյանի, Վահե Արմենի Մաթևոսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրանց կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի դեկտեմբերի 18-ի N ԱՏ-18122023-99-0589 տեղեկանք):

ե) Քաղաքացի Արմեն Սմբատի Մաթևոսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 147ա շենք թիվ 42 հասցեի բնակարանը վարձակալել է 2003 թվականի մարտի 7-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել

քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամիամայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Արմեն Սմբատի Մաթևոսյանի լիազորված անձ՝ Ալբերտ Մարտինի Մկոյանի դիմումը բավարարեց :

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ք. Գյումրի Երևանյան խճուղի 147ա շենք, թիվ 42 հասցեի 62.94 (վաթսուներկու ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Արմեն Սմբատի Մաթևոսյանին ծնված 1970 թվականին,
2) Զինա Համբարձումի Ղազարյանին ծնված 1970 թվականին,
3) Վահե Արմենի Մաթևոսյանին ծնված 1993 թվականին
4) Իշխանուհի Արմենի Մաթևոսյանին ծնված 1991 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Արմեն Սմբատի Մաթևոսյանին, Զինա Համբարձումի Ղազարյանին, Վահե Արմենի Մաթևոսյանին, Իշխանուհի Արմենի Մաթևոսյանին :
3. Քաղաքացիներ՝ Արմեն Սմբատի Մաթևոսյանին, Զինա Համբարձումի Ղազարյանին, Վահե Արմենի Մաթևոսյանին, Իշխանուհի Արմենի Մաթևոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Արմեն Սմբատի Մաթևոսյանին, Զինա Համբարձումի Ղազարյանին, Վահե Արմենի Մաթևոսյանին, Իշխանուհի Արմենի Մաթևոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2024թ. Գյումրի համայնք

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» Հունվարի 2024 **թվական** N 703-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆՈՒՇ ՆՈՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ՊՈՂՈՍ ՂՈՒԿԱՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂՈՒԿԱՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Անուշ Նորիկի Գրիգորյանը (անձնագիր՝ AL 0206973, տրված՝ 12.04.2023թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Շահինյան փող. 6ա շենք թիվ 55 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի փետրվարի 6-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Շահինյան փողոց 6ա շենք թիվ 55 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2002 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1040 որոշման համաձայն Գյումրի համայնքի Շահինյան փողոց 6ա շենքի թիվ 55 բնակարանը հատկացվել է քաղաքացի Անուշ Նորիկի Գրիգորյանի երեք անձից բաղկացած ընտանիքին և տրվել թիվ 55 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2002 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1040 որոշմամբ տրված թիվ 55 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ 2024 թվականի հունվարի 24-ի թիվ 2401168016039 տեղեկանքը, «Լուսաստղ» համատիրության 2024 թվականի հունվարի 24-ի թիվ 0-01 տեղեկանքը, Անուշ Նորիկի Գրիգորյանի, Պողոս Ղուկասի Գրիգորյանի,Արմենուհի Ղուկասի Գրիգորյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի փետրվարի 6-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մարտի 4-ը, դիմումատուն պատշաճ կարգով

ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Անուշ Նորիկի Գրիգորյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրենց վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Հ.Շահինյան փողոց 6ա շենք թիվ 55 հասցեի 54.59 (հիսունչորս ամբողջ հիսունինները հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 19022024-08-0039 վկայական):

բ) Գյումրի համայնքի Շահինյան փողոց 6ա շենք թիվ 55 հասցեի բնակարանը 2002 թվականի նոյեմբերի 20-ից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2002 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1040 որոշում):

գ) Գյումրի համայնքի Շահինյան փողոց 6ա շենք թիվ 29 հասցեի բնակարանում հաշվառված բնակվում են Անուշ Նորիկի Գրիգորյանը 2003 թվականից, Պողոս Ղուկասի Գրիգորյանը 2003 թվականից, Նելլի Արսենի Գրիգորյանը 2008 թվականից, Արման Պողոսի Գրիգորյանը 2011 թվականից, Հովհաննես Պողոսի Գրիգորյանը 2011 թվականից, Մարի Պողոսի Գրիգորյանը 2018 թվականից (հիմք՝ 2024 թվականի հունվարի 24-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ թիվ 240168016039 և «Լուսաստղ» համատիրության 2024 թվականի հունվարի 24-ի թիվ 0-01 տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Անուշ Նորիկի Գրիգորյանի, Պողոս Ղուկասի Գրիգորյանի, Արմենուհի Ղուկասի Գրիգորյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերոնշյալ քաղաքացու կողմից 1998թ.մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ, (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 9-ի-ի N ԱՏ-09022024-99-1012, N ԱՏ-09022024-99-1013, N ԱՏ-09022024-99-1022 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Անուշ Նորիկի Գրիգորյանը Գյումրի համայնքի Շահինյան փողոց 6ա շենք թիվ 55 հասցեի բնակարանը վարձակալել է 2002 թվականի նոյեմբերի 20-ից այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք

ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և(կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Անուշ Նորիկի Գրիգորյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Հ.Շահինյան փողոց 6ա շենք թիվ 55 հասցեի 54.59 (հիսունչորս ամբողջ հիսունիննը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Անուշ Նորիկի Գրիգորյանին ծնված 1959 թվականին,
2) Պողոս Ղուկասի Գրիգորյանին ծնված 1982 թվականին,
3) Արմենուհի Ղուկասի Գրիգորյանին ծնված 1980 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Անուշ Նորիկի Գրիգորյանին, Պողոս Ղուկասի Գրիգորյանին, Արմենուհի Ղուկասի Գրիգորյանին :
3. Քաղաքացիներ՝ Անուշ Նորիկի Գրիգորյանին, Պողոս Ղուկասի Գրիգորյանին, Արմենուհի Ղուկասի Գրիգորյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Անուշ Նորիկի Գրիգորյանին, Պողոս Ղուկասի Գրիգորյանին, Արմենուհի Ղուկասի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2024թ. Գյումրի համայնք

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» Հոկտեմբեր 2024 **թվականի** N 702-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ,ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 11-րդ հոդվածով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի թիվ N 15-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման մշտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)՝ համաձայն N1 հավելվածի,

2. Սահմանել հանձնաժողովի իրավասությունները՝ համաձայն N2 հավելվածի,

3. Սահմանել մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ընթացակարգերն ու չափանիշները՝ համաձայն N3 հավելվածի

4. Սահմանել առաջարկների ներկայացման հայտի, նախնական գնահատման աղյուսակի և միջոցառումների պլան-ժամանակացույցի ձևաթղթերը՝ համաձայն N 4, N 5 և N 6 հավելվածների

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնաժողովի անդամներին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Գ Յ Ո Ւ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր 055111150

2024թ. ք. Գյումրի **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

Հավելված 1
Գյումրի համայնքի ղեկավարի
<<07>> մարտի 2024 թվականի
N 102-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

h/h	Հանձնաժողովի անդամի անունը, ազգանունը	Զբաղեցրած պաշտոնը, զբաղմունքը	Հանձնաժողովում կարգավիճակը
1	Լուսինե Սանոյան	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	Հանձնաժողովի նախագահ
2	Լևոն Բարսեղյան	Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ	Հանձնաժողովի նախագահի տեղակալ
3	Լենա Մխիթարյան	Համայնքապետարանի աշխատակազմի միջազգային դրամաշնորհային ծրագրերի պատասխանատու,մասնակցային բյուջետավորման գործընթացի պատասխանատու	Հանձնաժողովի քարտուղար
4	Կարեն Մալխասյան	Ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ
5	Լիլիթ Մուրադյան	Ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ
6	Վարդևան Հակոբյան	Ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ
7	Հասմիկ Մարգարյան	Ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ
8	Մելիքյան Գևորգ	Ավագանու անդամ	Հանձնաժողովի անդամ

Հավելված 2
Գյումրի համայնքի ղեկավարի
<<01>> մարտի 2024 թվականի
N 102-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Կազմակերպում և համակարգում է մասնակցային բյուջետավորման գործընթացը,
2) կազմում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում յուրաքանչյուր տարվա մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման պլան-ժամանակացույցը,
3) կազմակերպում է գործընթացի մասին համայնքի բնակչության իրազեկմանն ուղղված տարբեր միջոցառումներ՝ համագործակցելով տեղական լրատվամիջոցների հետ,
4) համագործակցում է հասարակական կազմակերպությունների, ակտիվ բնակիչների, կամավորների և այլ կառույցների հետ,
5) իր կազմից ձևավորում է տարբեր աշխատանքային խմբեր,
1) իրականացնում է գործընթացի համար անհրաժեշտ ադմինիստրատիվ և լոգիստիկ աշխատանքներ, նախապատրաստում է տարբեր նյութեր և փաստաթղթեր, մշակում կամ համաձայնեցնում է տեղեկատվական նյութերի բովանդակությունը՝ հրապարակումների, հոդվածների, հարցազրույցների, ներկայացումների, բուկլետների, պաստառների, տեսանյութերի թեմաները,
2) ապահովում է գործընթացում բնակչության տարբեր խմբերի ներգրավվածությունը՝ կազմակերպելով հանդիպումներ, ժողովներ, լսումներ և քննարկումներ,
3) համակարգող և խորհրդատվական աջակցություն է տրամադրում քաղաքացիներին և նախաձեռնող խմբերին առաջարկների պատրաստման և ներկայացման գործընթացում,
4) կազմակերպում է առաջարկների ընդունման և քվեարկության էլեկտրոնային համակարգի պատշաճ գործունեությունը,
5) կազմակերպում է առաջարկների թղթային տարբերակով ընդունման և քվեարկության գործընթացը,
6) գնահատում է քաղաքացիների և նախաձեռնող խմբերի կողմից ներկայացված առաջարկների հայտերը,
7) կազմում է քվեարկության համար պատրաստված առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով,
8) կազմում է սահմանված չափանիշների չհամապատասխանող առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով,
9) ամփոփում է էլեկտրոնային և թղթային քվեարկության արդյունքները,
10) անհրաժեշտության դեպքում համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում առաջարկություն՝ գործընթացի փուլերի ժամկետների փոփոխության վերաբերյալ,
11) կազմում և համայնքի ղեկավարին է ներկայացնում գործընթացի վերաբերյալ ընթացիկ և տարեկան հաշվետվություններ,
12) մասնակցային բյուջետավորման գործընթացի բոլոր փուլերում բնակչության տեղեկատվական արշավի պատասխանատուն է:

Հավելված 3
Գյումրի համայնքի ղեկավարի
<<07>> մարտի 2024 թվականի
N 1021 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Մասնակցային բյուջետավորման գործընթացն իրականացվում է յուրաքանչյուր տարի,հետևյալ փուլերով՝

1) նախապատրաստական փուլ,
2) իրազեկման փուլ,
3) առաջարկների ներկայացման փուլ,
4) առաջարկների նախնական գնահատման փուլ,
5) քվեարկության փուլ,
6) իրականացման փուլ,
7) հաշվետվության փուլ:

Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ ներկայացվող առաջարկների համար սահմանվում են հետևյալ չափանիշները՝

1) առաջարկը պետք է իրականացվի համայնքի տարածքում,
2) առաջարկի իրականացումը պետք է ներառվի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների մեջ,
3) առաջարկի իրականացման համար անհրաժեշտ նախահաշվային գինը չպետք է գերազանցի ավագանու կողմից մասնակցային բյուջետավորման համար հատկացված առավելագույն գումարը,
4) առաջարկով նախատեսվող նախագիծը չպետք է լինի ընթացիկ և արդեն ներառված լինի համայնքի բյուջեում կամ զարգացման ծրագրերում,
5) առաջարկի իրականացումը պետք է լինի տեխնիկապես հնարավոր,
6) առաջարկների գնահատման ժամանակ կարող են դիտարկվել լրացուցիչ չափանիշներ՝ ելնելով ավագանու կողմից սահմանված առաջնահերթություններից:

Հավելված 4
Գյումրի համայնքի ղեկավարի
<<--------->> մարտի 2024 թվականի
N -------- որոշման

ՀԱՅՏ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ

1	***Առաջարկի հեղինակի անուն,ազգանուն /անվանում/***	
2	***Կոնտակտային տվյալներ*** /հասցե, հեռախոս, էլ.փոստ/	
3	***Առաջարկի անվանումը, նկարագրությունը***	
4	***Հիմնախնդիրը, որի լուծմանն ուղղված է առաջարկը***	
5	***Առաջարկի իրականացման շնորհիվ ակնկալվող արդյունքները***	
6	***Առաջարկի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները***	

Հավելված 5
Գյումրի համայնքի ղեկավարի
«07» մարտի 2024 թվականի
N 7024 որոշման

ԱՂՅՈՒՍԱԿ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

N	Առաջարկի անվանումը	ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ						Տեղափոխվել է քվեարկության փուլ
		Իրականացվելու է համայնքի կարածքում	Իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակում	Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու հատկացրած սահմանաչափը	Հանդիսանում է նոր առաջարկություն	Տեխնիկապես հնարավոր է իրականացնել	Համապատասխանում է ավագանու սահմանած առաջնահերթություններին	
1		Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
2								
3								

Հավելված 6
Գյումրի համայնքի ղեկավարի
<<27>> մարտի 2024 թվականի
N 702-Ա որոշման

ՊԼԱՆ - ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ	ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
1	Մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման մշտական հանձնաժողովի նստի հրավիրում Հանրային լսում-քննարկում Աշխատանքային խմբի ձևավորում՝ համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների, ՀԿ-ների ներկայացուցիչների և կամավորների մասնակցությամբ	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով	11.03.2024թ. 15.03.2024թ.
2	Գյումրի համայնքում հանրային իրազեկման և հանրության հետ համագործակցության մեխանիզմների և գործընթացների մշակում, քաղաքացիական հասարակության ներգրավում բյուջետային որոշումների կայացմանը: Մասնակցային յուրաքանչյուր գործընթացի նպատակի, դրա շրջանակների, սահմանափակումների, նախատեսվող արդյունքների և ժամկետների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տրամադրում հանրությանը:	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով, աշխատանքային խմբի անդամներ	15.03.2024թ. 20.03.2024թ.
3	Գյումրի համայնքի 2024 թվականի մասնակցային բյուջետավորման նախագծի հայտերի , ձևաչափերի , ծրագրերի և դրանց հիմնավորումների ներկայացում, հրապարակում, հանրային իրազեկումներ՝ տեղեկատվություն նախատեսվող գործընթացների, միջոցառումների, թիրախային ոլորտների/ծրագրերի, շահառուների, ժամկետների, վայրերի, հանրության մասնակցության ձևերի, ինչպես նաև կոնտակտային անձանց և միջոցների վերաբերյալ:	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով, աշխատանքային խմբի անդամներ	20.03.2024թ-05.04.2024թ
4	Քաղաքացիների կողմից առաջարկ-ծրագրերի ներկայացում	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի քարտուղար	10.04.2024թ-10.05.2024թ
5	Հայտերի՝ առաջարկ-ծրագրերի հավաքագրում, ամփոփում, առաջարկների ցանկի կազմում, նախնական գնահատում՝ յուրաքանչյուր առաջարկի	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով	10.05.2024թ-17.05.2024թ

	համապատասխանությունը սահմանված չափանիշներին:		
6	Հանրային իրազեկման միջոցով ներկայացնել քվեարկության համար պատրաստված, հրապարակման ենթակա առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով,սահմանված չափանիշներին չհամապատասխանող առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով:	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով, աշխատանքային խմբի անդամներ	17.05.2024թ.-27.05.2024թ.
7	Սահմանված չափանիշներին համապատասխանող առաջարկ-նախագծերի հանրային քննարկումներ	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով,	27.05.2024թ.- 04.06.2024թ.
8	Քվեարկության փուլ անցած առաջարկների վերբեռնում համայնքապետարանի պաշտոնական կայքում/բաժնում՝ քվեարկության համար: Համայնքի ղեկավարի կողմից առաջարկների հասանելիության և քվեարկելու իրավասության ապահովում միայն համայնքի բնակիչների կողմից :	Համայնքապետարանի տեղեկատվական համակարգի օպերատոր	27.05.2024թ.- 04.06.2024թ.
9	Քվեարկության փուլ	Համայնքապետարանի տեղեկատվական համակարգի օպերատոր	05.06.2024թ.- 20.06.2024թ.
10	Քվեարկության համար սահմանված ժամկետի ավարտից հետո հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքներ ամփոփում: Առավելագույն ձայներ հավաքած առաջարկի (առաջարկների) վերաբերյալ հանձնաժողովի որոշման կայացում: Առավելագույն արդյունքներով առաջարկների հրապարակում և իրազեկում ծրագրի հեղինակներին:	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով,	21.06.2024թ.- 28.06.2024թ.
11	Հանձնաժողովի կողմից ընտրված առաջարկի մշակում: Մշակումն իրականացվում է սահմանված նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան, կազմվում են նախագծանախահաշվակային առաջադրանքներ և այլ տեխնիկական փաստաթղթեր: Մշակված առաջարկի (հիմնավորումներով) ներկայացում համայնքի ավագանու հավանությանը :	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով, ֆինանսատնտեսագիտական բաժին, համայնքի ավագանի	29.06.2024թ-06.07.2024թ
12	Ընտրված և մշակված առաջարկը իրականացման մանրամասներով և հիմնավորումներով համայնքի ավագանուն ներկայացում :	ֆինանսատնտեսագիտական բաժին	06.07.2024թ-13.07.2024թ

13	Ընտրված առաջարկի իրականացում՝ պահպանելով գնումների մասին օրենսդրության և այլ նորմատիվ ակտերի պահանջները:	ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, գնումների համակարգող	13.07.2024թ.-20.07.2024թ.
14	Ընտրված առաջարկ(ներ)ի իրականացման նկատմամբ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից մշտադիտարկման իրականացում , այդ գործընթացում հեղինակի ներգրավվածության ապահովվում համայնքի ղեկավարի կողմից:	համայնքի ավագանի և համայնքի ղեկավար, առաջարկի հեղինակ	Ծրագրի իրականացման սկզբից մինչև ավարտը
15	Մասնակցային բյուջետավորման գործընթացի մասին հանձաժողովի կողմից հաշվետվության ներկայացում համայնքի ղեկավարին, որն իր մեջ պետք է ընդգրկի հաշվետվություն իրազեկման արշավի մասին, առաջարկների ներկայացման և նախնական ընտրության մասին, քվեարկության արդյունքների մասին,առաջարկի իրականացման մասին:	Մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողով,	Ծրագրի ավարտին հաջորդող 15 օրվա ընթացքում, մինչև բյուջետային տարվա ավարտը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2024 **թվականի** N 701-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15 -Ի N 1433-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ախուրյանի խճուղու հարևանությամբ քաղաքացի Լավուրիկ Ջանոյանի կողմից տեղադրված կրպակը ապամոնտաժվել է և տարածքը կառուցապատումից ազատվել է:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հաշվի առնելով քաղաքացի Լավուրիկ Ջանոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 21-ին N 3419 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել 2009 թվականի հունլսի 15-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Լավուրիկ Ջանոյանին ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով 4,0 քառ.մ մակերեսով հողամաս կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1433-Ա որոշումը:
2. Լուծել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին 2009 թվականի օգոստոսի 03-ի (գրանցված սեղանամատյանում N 3996) պայմանագիրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լավուրիկ Ջանոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» մարտի 2024 **թվականի** N 700-Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-ԻՆ ՏՐՎԱԾ N113/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ժաննա Արտուշի և Ռաֆիկ Ռազմիկի Հովհաննիսյաններին Գյումրի քաղաքի Մնջոյան փողոց №6/2 հասցեով հողամասում բնակելի տան կառուցման համար 2023 թվականի հունիսի 30-ին տրվել է N113/23 շինարարության թույլտվությունը:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 4/չորս/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2023 թվականի հունիսի 30-ին տրված N113/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 4/չորս/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

06.03.2024

Հ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի